ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **28/հուլիսի/2020 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու .....6..... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ս. Մարգարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հ. Դավթյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյանը, համայնքի գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարները:

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 28-ի նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը*.

1.1. Ջերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի երկրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի N 8-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելումասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.4. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Ջերմուկ համայնքի 2020 թվականի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ս. Վարդանյան

1.6. Դրամական հատկացումներ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Առաքելյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----6---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ընդունել ի գիտություն Ջերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի երկրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----6---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 8-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱՋԱՐՅԱՆ/

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածներին համապատասխան, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝

1. Ընդունել ի գիտություն, որ համայնքի բյուջեի կատարման ընթացքում բյուջեի տնտեսագիտական դասակարգման հոդվածների միջև համայնքի ավագանու 17.01.2020 թ. «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին» N 8-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված չափաքանակների 15 %-ի սահմաններում (01.07.2020 թ. դրությամբ) և Ջերմուկ համայնքի ավագանու 26.05.2020 թ. «Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու մասին» N 36-Ա որոշմամբ կատարվել են մի շարք փոփոխություններ ու ներքին վերաբաշխումներ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ (հիմնավորումները՝ համաձայն Հավելված 2-ի)

ա) Որոշման հավելվածի *Հատված 1-ի*՝

* 1000-րդ տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «514963,2» թիվը փոխարինել «516463,2» թվով

* 1340-րդ և 1342-րդ տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «15044,5» թիվը փոխարինել «16544,5» թվով

բ) Որոշման հավելվածի *Հատված 2-ի*՝

* 2000-րդ տողի 6-րդ սյունակում «685017,0» թիվը փոխարինել «686517,0» թվով, 7-րդ սյունակում «529376,9» թիվը փոխարինել «530876,9» թվով,

*2400-րդ տողի 6-րդ սյունակում «71126,7» թիվը փոխարինել «110643,2» թվով, 7-րդ սյունակում «59253,6» թիվը փոխարինել «62437,6» թվով, 8-րդ սյունակում «11873,1» թիվը փոխարինել «48205,6» թվով,

* 2450-րդ տողի 6-րդ սյունակում «69286,7» թիվը փոխարինել «139803,2» թվով, 7-րդ սյունակում «41088,7» թիվը փոխարինել «44272,7» թվով, 8-րդ սյունակում «28198,0» թիվը փոխարինել «95530,5» թվով,

* 2451-րդ տողի 6-րդ սյունակում «4032,0» թիվը փոխարինել «80548,5» թվով, 7-րդ սյունակում «2334,0» թիվը փոխարինել «5518,0» թվով, 8-րդ սյունակում «1698,0» թիվը փոխարինել «75030,5» թվով,

* 2455-րդ տողի 6-րդ սյունակում «65254,7» թիվը փոխարինել «59254,7» թվով, 8-րդ սյունակում «26500,0» թիվը փոխարինել «20500,0» թվով»

* 2470-րդ և 2473-րդ տողերի 6-րդ սյունակում «35474,0» թիվը փոխարինել «4474,0» թվով, 8-րդ սյունակում «34200,0» թիվը փոխարինել «3200,0» թվով»,

* 2600-րդ տողի 6-րդ սյունակում «103210,2» թիվը փոխարինել «47706,6» թվով, 8-րդ սյունակում «59091,0» թիվը փոխարինել «14367,4» թվով»,

* 2620-րդ և 2621-րդ տողերի 6-րդ սյունակում «65146,6» թիվը փոխարինել «9643,0» թվով, 8-րդ սյունակում «69871,0» թիվը փոխարինել «3587,4» թվով»,

* 2900-րդ տողի 6-րդ սյունակում «144007,2» թիվը փոխարինել «164601,3» թվով, 7-րդ սյունակում «127598,2» թիվը փոխարինել «129021,2» թվով, 8-րդ սյունակում «16409,0» թիվը փոխարինել «35580,1» թվով»,

* 2910-րդ և 2911-րդ տողերի 6-րդ սյունակում «84124,6» թիվը փոխարինել «104718,7» թվով, 7-րդ սյունակում «70215,6» թիվը փոխարինել «71638,6» թվով, 8-րդ սյունակում «13909,0» թիվը փոխարինել «33080,1» թվով»,

* 3000-րդ տողի 6-րդ և 7-րդ սյունակներում «22528,3» թիվը փոխարինել «24028,3» թվով,

* 3040–րդ և 3041-րդ տողերի 6-րդ և 7-րդ սյունակներում «1560,0» թիվը փոխարինել «3060,0» թվով,

* 3100-րդ, 3110-րդ և 3112-րդ տողերի 6-րդ և 7-րդ սյունակներում «12612,9» թիվը փոխարինել «8005,9» թվով,

գ) Որոշման հավելվածի *Հատված 3-ի*՝

* 4000-րդ տողի 4-րդ սյունակում «685017,0» թիվը փոխարինել «686517,0» թվով, 5-րդ սյունակում «529376,9» թիվը փոխարինվել է «530876,9» թվով,

* 4050-րդ տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «529376,9» թիվը փոխարինել «530876,9» թվով,

* 4100-րդ և 4110-րդ տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «148574,2» թիվը փոխարինել «149774,2» թվով,

* 4114-րդ տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «636,0» թիվը փոխարինել «1836,0» թվով,

* 4200–րդ տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «63075,7» թիվը փոխարինել «67982,7» թվով,

* 4240-րդ և 4241-րդ տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «33854,4» թիվը փոխարինել «7992,4» թվով,

* 4260-րդ տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «11295,8» թիվը փոխարինել «11595,8» թվով,

* 4264-րդ տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «4930,0» թիվը փոխարինել «5063,5» թվով,

* 4266-րդ տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «860,0» թիվը փոխարինել «896,0» թվով,

* 4269-րդ տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «1980,0» թիվը փոխարինել «2110,5» թվով,

* 4770-րդ և 4771-րդ տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «12612,9» թիվը փոխարինել «8005,9» թվով,

* 5112-րդ տողի 4-րդ և 6-րդ սյունակներում «35000,0» թիվը փոխարինել «44725,2» թվով,

* 5113-րդ տողի 4-րդ և 5-րդ սյուններում «115400,0» թիվը փոխարինել «105674,8» թվով:

3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով կատարված փոփոխությունները հաշվի առնելով՝ հաստատել Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեն՝ 28.07.2020 թ. դրությամբ՝

3.1. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ՝

եկամուտներ - 530876.9 հազար ՀՀ դրամ

ծախսեր - 530876.9 հազար ՀՀ դրամ

Ընդամենը՝ վարչական բյուջե -530876.9 հազար ՀՀ դրամ

3.2. *ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ*

եկամուտներ - 206165.0 հազար ՀՀ դրամ

ծախսեր - 206165.0 հազար ՀՀ դրամ

Ընդամենը՝ ֆոնդային բյուջե- 206165.0 հազար ՀՀ դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեն առ 28.07.2020 թ.՝ 737041.9 *հազար ՀՀ դրամ*:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ----------6---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48-Ն/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

1. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

հանձնաժողովի նախագահ՝ Ս. Մարգարյան - համայնքի ղեկավարի տեղակալ

արձանագրող՝ Գ. Թադևոսյան - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

անդամներ՝ Ա. Գառնիկյան - համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ

Վ. Ղազարյան - համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Ա. Գևորգյան- համայնքի ավագանու անդամ

2. Մրցութային գործընթացում սակարկություններն իրականացնող (աճուրդավար) նշանակել Վ. Ղազարյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ------6------ *Դեմ*------0------- *Ձեռնպահ*---0---------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականության հետևյալ հողամասերը աճուրդով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով յուրաքանչյուր հողամասի օտարման նպատակը և մեկնարկային գինը համաձայն աղյուսակի՝

հողամասի օտարման նպատակը	հողամասի գտնվելու վայրը	մակերեսը հա	մեկնարկային գինը, դրամ	հողամասի ծածկագիրը	նպատակային նշանակությունը	գործառնական նշանակությունը կամ հողատեսք
Գյուղատնտեսական գործունեության համար	գ. Գնդեվազ	0,11143	50 000	10-016-0216-0116	Գյուղատնտեսական	այլ հողատեսք և վարելահո
Գյուղատնտեսական գործունեության համար	ք. Ջերմուկ	1,1	150 000	10-002-0407-0402	Գյուղատնտեսական	այլ հողատ
Գյուղատնտեսական գործունեության համար	ք. Ջերմուկ	1,21563	150 000	10-002-0458-0033	Գյուղատնտեսական	այլ հողատ
հասարակական կառուցապատման համար	ք. Ջերմուկ Պ. Սևակի փողոց, 1-ին փակուղի N 11	0,69118	8 600 000	10-002-0006-0058	բնակավայրերի	Հասարակ կան կառուցապ ման

հանգստի գոտու կառուցման համար	ք. Ջերմուկ, Մաշտոցի փողոց N 8/1	0,12802	1 045 000	10-002-0024-	հատուկ պահպանվող տարածքների հողեր	հանգստի համար նախա-տեսված
հանգստի գոտու կառուցման համար	ք. Ջերմուկ, Մաշտոցի փողոց N 10/1	0,11809	1 000 000	10-002-0024-	հատուկ պահպանվող տարածքների հողեր	հանգստի համար նախատեսվա
հանգստի գոտու կառուցման համար	ք. Ջերմուկ, Մաշտոցի փողոց N 12/2	0,29647	2 405 000	10-002-0024-	հատուկ պահպանվող տարածքների հողեր	հանգստի համար նախատեսվա
հանգստի գոտու կառուցման համար	ք. Ջերմուկ, Գետափնյան փողոց, N 6/1	0,05706	709 000	10-002-0106-	հատուկ պահպանվող տարածքների հողեր	հանգստի համար նախատեսվա
հասարակական կառուցապատման համար	ք. Ջերմուկ, Շահումյան փողոց, 1-ին փակուղի N 6	0,0778	1 000 000	10-002-0018-	բնակավայրերի	Հասարակա-կան կառուցապատ ման համար

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----6----- *Դեմ*----0---------- *Ձեռնպահ*----0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով՝

1. Համաձայնություն տալ 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Ջերմուկ համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների (Ձև 22 և Ձև 22ա):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----6----- *Դեմ*----0---------- *Ձեռնպահ*----0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51-Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշմամբ հաստատված կարգը և հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչների դիմումները և դրանց հիման վրա համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (սոցիալական աշխատող) կողմից կազմված սոցիալական դեպքի վարման գործերը՝

1. Ջերմուկի համայնքի 2020 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություններ տրամադրել համայնքի հետևյալ բնակիչներին՝

Նիկոլայան Արփինե՝ 200 000 (երկու հարյուր հազար)

Միքայելյան Լյուդմիլա՝ 100 000 (հարյուր հազար)

Անդրեասյան Գերասիմ՝ 200 000 (երկու հարյուր հազար)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ------6----- *Դեմ*-----0------- *Ձեռնպահ*-----0-------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	ստորագրություն
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի	բացակա
Բագրատյան Արտակ Կառլենի	
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	բացակա
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	
Գրիգորյան Արմեն Գրիշայի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա
Սարգսյան Հասմիկ Ժորայի	
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	բացակա

Ջերմուկ համայնքի ղեկավար՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը _____